1988թ.-ի Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությունը

Դեկտեմբերի 7-ին՝ 1988 թ.-ի Սպիտակի երկրաշարժից 37 տարի անց, դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար տիկին ԱՆԱՁԱՎԱ Յոկոն մասնակցել է երկրաշարժի զոհերի հիշատակի ամենամյա արարողությանը: Արարողության ժամանակ նա ծաղիկներ է խոնարհել հուշահամալիրի մոտ և Լոռու մարզային փրկարարական վարչության պետի՝ գնդապետ Գաբրիելյանի ուղեկցությամբ, ծաղիկներ է խոնարհել նաև Արևելյան Ճապոնիայի մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին, որը տեղադրվել է գնդապետ Գաբրիելյանի և տեղի կամավորների կողմից:

Արարողությունից հետո տիկին ԱՆԱՁԱՎԱՆ այցելել է Սպիտակ քաղաքի փրկարարական ծառայության բաժին և տեղեկացել է, որ վեց տարի առաջ Ճապոնիայի կողմից նվիրաբերված հրշեջ մեքենաները ակտիվ դեր են խաղացել այս տարի տարածաշրջանում տեղի ունեցած անտառային հրդեհների ժամանակ հրդեհաշիջման աշխատանքներում, ինչպես նաև ծանոթացել է Լոռու մարզում հրշեջ և փրկարարական աշխատանքների հետ կապված ջանքերին և նախաձեռնություններին:

2012 թվականին JICA-ի ծրագրի միջոցով Ճապոնիայի աղետից տուժած տարածքներ այցելելուց հետո, գնդապետ Գաբրիելյանը առաջ է քաշել է Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցնելու գաղափարը: Ճապոնիայի և Հայաստանի միջև փոխըմբռնումը խթանելու այս ջանքերի համար նա անցյալ տարի արժանացել է Ճապոնիայի արտաքին գործերի նախարարի գովասանագրի: